

Ի. ՌԵՅՆ

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԱԿՏՈՐԸ

087.1
Ռ-32

ԳԵՏՅՐԱՏ
ՑԵՐԵՎԱՆ
1933

24 JUL 2013

ՄԱՆԿԱԿԱՆ—ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

087.1

Ու-38

Ի. ՌԵՏՆ

պ.


ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԱԿՏՈՐԸ

ԺԱՐԿՍՆ Ի. ԱՐՐԱԶԱՍՅԱՆ

1010
42463

ՊԵՏՎՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1933



ՏՐԱԿՏՈՐՆ ԻՆՉՊԵՍ Ե ԳՆՈՒՄ ՓԽՐՈՒՆ ՀՈՂՈՎ

Տրակտորի լինելն են
գետք նրա ակների այդ
խլունները: Ինչո՞ւ համար
են նրա շրջանակներին
պտուտակով պնդացրել
այդ խթանները, վորոնք
այդպես խորը հողն են
խրվելը — նրա համար,
վորպեսզի նրանք ոգնեն
տրակտորին տեղաշարժ-
վել դաշտի վրայով, քա-
շել իր յետևից գութա-
նը, փոցքը, շարքացանը,
խրձկապ մեքենան կամ
կոմբայնը: Կոմբայնը մի
մեքենա չէ, վոր լինքն է
և հնձում և կայսում —
բոլորը միանգամից:

Դե, փորձիր կանգնել
դահուկի վրա և անցնել
փխրուն ձյունի վրայով,
միայն առանց ձեռնափայտերի: Դժվար է: Դահուկները հագիվ հազ
շարժվում են կամ թե չե՝ սահում են իրենց տեղում: Թե պոչիցդ
մի լնկեր ել քաշ բնկավ՝ «ինձ ել տար հետդ» — դե՛հ, դարդ ու
ցավ կիտեցիր գլխիդ՝ տեղիցդ շարժվել չես կարող:
Իսկ թող լես քո ձեռքը տամ դահուկի ոգնական ձեռնափայ-
տերը ծալրապանակներով, տես, բանդ բոլորովին ուրիշ կերպ կգնա:



Կբարձրացնես ձեռնափայտերը, ուժով ձյան մեջ կիջեցնես, մի թափ կանես՝ եհ, այն ժամանակ վոչ թե մեկ, այլ յերկու աղամարգ ել կքաշես յետևիցդ:

Այժմ հասկանալի լե, թե ինչո՞ւ տրակտորի անիվներին խրթաններ են պտուտակած:

Մեկ մտիկ տուր՝ ինչպես ե աշխատում դաշտում տրակտորը: Երում ե իր խթանները փխրուն հողի մեջ, նրանցով թափ ե առնում գեանից, ինչպես դու ձյունից, և ապա քաշում ե իր յետևից կոմբայնը:




Իսկ յեթե հանենք այդ խրթանները — ինչ կլինի: Տրակտորի քաշիչ ուժը կզակասի և անիվները կպատվեն իրենց տեղում: Այսպես, որինակ իրենց տեղում պտույտ են դալիս յերբեմն շոգեքարշի անիվները, յերբ ուրսները սրկուն են, իսկ վազոնները շատ բեռնված: Բայց, արդյո՞ք, տրակտորը խթանների պետք ունի, յերբ անցնում ե խճուղով՝ առանց կցան մեքենաների: Իհարկե վոչ: Նրանք միայն ճանապարհը կփչացնեն, իսկ տրակտորին ոգնել չեն կարող: Հենց այդ միջոցին հազցրու տրակտորին հարթ

չըջանալներ, ինչպես նկարում ցույց ե տրված, ու քչիը ճանապարհով, ինչպես շին հազած ավտոմոբիլը, միայն վոչ ուետինե չին, այլ պողպատե:

Այն տրակտորը, վոր իր ակներին խթաններ ունի, կոչվում ե ակնավոր տրակտոր:



ԻՆՉՊԵՍ Ե ԵԱՐԺՎՈՒՄ ՏՐԱԿՏՈՐԸ ԱՆՀԱՐՄԱՐ ՏԵՂԵՐՈՎ




Ահա ծառս յերավ տրակտորը, վոչ վոր խրտնած մի ձի, բայց ձիավորը՝ տրակտորավարը սանձը յետ չի ձգում, վախ չի դգում, այլ սպասում ե հանգիստ, մինչև վոր տրակտորի առաջամասը կիջնիցած և դեմ ընկած վայտի կտորը կը մնա յետևում:

Ինչո՞վ ե տարբերվում այս տրակտորը՝ ակնավորից:

Ակնավոր տրակտորն ունի խթաններ, սա յիլ ունի, բայց ակնավոր տրակտորի խթաններն այլ կերպ են շինված: Ահա թե ինչն ե ամենագլխավորը: Ակնավորի խթանները ակների վրա լեն, իսկ սրանը՝ պողպատե ժապավենի — թրթուրի վրա: Արդյո՞ք նման ե այս ժապավենը թրթուրի, բնական թրթուրի, վոր սողում ե ծառերի տերևներով: Յեթե վոր մտիկ տաս, թե ինչպես թրթուրային ժապավեն ունեցող այդպիսի տրակտորը շարժվում ե դաշտով, այն ժամանակ կհասկանաս, թե ինչո՞ւ այդ թրթուրավոր տրակտոր ե կոչվում: Ինչպես վոր թրթուրի ամբողջ մարմինը բաղկացած ե առանձին տոսիկներից, այնպես ել տրակտորի թրթուրը շինված ե առանձին թիակներից, նկարի վրա նրանք յերևում են: Այստեղ ել պատմելու բան չի մնում: Ամեն մի թիակի կողքին կա փոքրիկ դլանակ. ձգեցիք դլանակը, նրա յետևից ել ձգվում ե թիակը:



Բայց ինչն է ձգում զլանակը: Լավ մտիկ տուր այս տրակ-
տորի յետևի ականը: Այդ խոն հասարակ տեղ չե. անանում ես,
նրա վրա կան ամուր և ուժեղ
ատամներ: Ահա, յերբ ակն
սկսի պտտվել, ատամներն
անցնում են թիակների
զլաններին. մի ատամը՝ ա-
ռաջի պահին, յերկրորդ
ատամը՝ յերկրորդ գլանին
և թրթուրն սկսում է իր
վազքը, վերևից ական վրա-
յով, ներքևից՝ հողի վրայով,
խթանները դեմ են անում
հողին և այսպիսով շարժվում են
ամբողջ տրակտորը:



Իսկ ինչի համար է հարկավոր այդպիսի թրթուր ունեցող
տրակտորը:

Այ, այստեղ պետք է գլխի ընկնել: Ասենք թե, ուղեցար
ձմռան խոր ձյան միջոցով անտառ գնալ, և գնացիր թաղիքե վոտ-
նամաններով: Վոտներդ խրվում են ձյան մեջ. աչք ձյունից
դուրս կհանես ձախը կխրվի, ձախը կհանես՝ աչք կը-
խրվի: Հիմա դարձիր տուն, հագիր դահուկները, առ ձեռքդ փայ-
տերը. արդյոք նույն բանն է: Տեսնում ես վոտներդ ձյան
մեջ չեն խրվում, դնալն ել՝ հեշտ ու հանգիստ է: Ինչիցն է այդ
Քաշդ չպակսեց, այլ ընդհակառակն՝ դեռ ավելացավ դահուկների
քաշը: Բայց դնալը հեշտացավ: Յեթե վերցնես ավելի լայն ու լերկար
դահուկներ, ապա ձյան մեջ դեռ ավելի քիչ կխրվեն վոտերդ:
Տրակտորը թրթուրածև ժապավենով նույնքան ազատ ու հեշտ կը
շարժվի ձյունով, վորքան դու քո գահուկներով: Դրա համար ել
ձյուն չեղած ժամանակ պործի լեն դնում թրթուրավոր տրակտոր-
ները:

Չմեռ ժամանակ դաշտում տրակտորն անելու բան չունի: Սակայն դրա փոխարեն անտառային անտեսության մեջ տրակտորի զլխավոր աշխատանքը ձմեռն է լինում: Առանց ճանապարհի, այն ել ձյան կիտուղների վրայով աշխատում է միայն թրթուրավոր տրակտորը: Այս լեթե անհրաժեշտ լինի ավազի վրայով գնալ, լեթե ճահճոտ անդում պետք է աշխատել, ինչպիսի տրակտոր է պետք: Իհարկե, թրթուրավոր տրակտոր: Բայց միայն թրթուրածե ժապավենը պետք է լավ հագցրած լինի ակներին, ալապետ կարող է դուրս ընկնել ակներից և շուտ փչանալ: Արդյոք, լավ է, լեթե ժապավենը ական վրա թույլ է ձգված: Անկասկած վատ է: Իսկույն ձեռքդ առ ակները հրող զսպանակը, և թուլացրու անքան մինչև վոր առաջի ու լետի ակներն իրարից կենտանան և ժապավենը կձգվի:

Հենց այդպես ել ձգում են հեծանիվի շղթան: Ուրեմն՝ այնտեղ, ուր ակնավոր տրակտորը չի անցնում, չի կարողանում աշխատել կանգ կառնի ու կմա, այնտեղ գրությունը կփրկի թրթուրը՝




Թրթուրավոր տրակտոր:


ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐԵԼ ՏՐԱԿՏՈՐԸ

Քանի՞ անգամ տրակտորը ուժեղ է ձիուց:—Նայած տրակտորին: Կան այնպիսիները, վորոնք ուժեղ են ձիուց տասն անգամ, կան և քսան անգամ, կան և 60 անգամ: Ստալինգրադի մեր տրակտորի գործարանը պատրաստում է տասն և հինգ ձիու ուժի տրակտորներ, Սարկովի գործարանը՝ քսան և հինգ ձիու ուժի, Իսկ Չելյաբինսկյնը՝ հիսուն ձիու ուժի տրակտորներ:

Արդյոք դաշտային աշխատանքների ժամանակ սալ լծած ձի թոկի կառավարել ես: Վոնց ես, լեթե հինգ ձի միանգամից սալը լծեն ու սանձերը ձեռքդ տան: Կարծեմ դժվար կլինի նրանց կառավարել: Այս լեթե վաթսուսն ձի լծեն: Այս դեպքում վաղ մի սալապան կառավարել չի կարող: Բաս, տրակտորի հետ վոնց կանես: Տրակտորը կարող է վաթսուսն ձիու ուժ ունենալ: դա լել կառավարելու պետք ունի չե: Ահա՞ գալիս է տրակտորը, վարի մի ուղիղ, հավասար շերտ է քաշում դաշտի լեռեսով: հասավ միջնակին, շուտ ավեց ու լետ է դնում: Տես, ինչպես ազատ շուտ լեկան տրակտորի առաջին ակները: Իսկ մի լեթե դեկը բռնող տրակտորավարը շատ ուժ է գործ դնում, վորպեսզի լետ դարձնի տրակտորը, կամ կառավարի այն:




Հանդիստ նստել է տրակտորավարը դեկի լետեր, ձեռքն է առել դեկանիլը և ժպտում է: Հեշտ ու ազատ դարձնում է անիվը:



Հանդիստ նստել է տրակտորավարը դեկի լետեր, ձեռքն է առել դեկանիլը և ժպտում է: Հեշտ ու ազատ դարձնում է անիվը:

աջ կողմը՝ տրակտորը նույնպես շուռ է գալիս դեպի աջ, ձախ է դարձնում՝ տրակտորը դառնում է դեպի ձախ: Վաթսուն ձի լե կառավարում, բայց այդ ավելի հեշտ է, քան մի իսկական ձի կառավարելը: Ի՞նչն է պատճառը: Ա՛ն, վոր մեքենայի բոլոր մասերն այնպես են շինված, վոր գլխավոր աշխատանքն ինքը՝ մեքենան կատարի, իսկ մարդը միայն կառավարի այն և հետևի, վոր սարքին լինի: Այդպես է ավտոմոբիլը, շոգեքարշը, շոգենավը և ամեն տեղ, — վորտեղ աշխատում են մեքենաները:




Տրակտորը հնազանդվում է տրակտորավորի ձևերում զեղած գեկին, վորովհետև գեկը միացրած է տրակտորի ախտերի հետ: Բոլոր այն մասերը, վորոնք գեկից դեպի ակներն են գնում, միասին կոչվում են պեկային սարք:

Ի՞ՆՉ ՄԱՍԵՐԻՑ Ե ԲԱՂԿԱՅԱԾ ՂԵԿԱՅԻՆ ՍԱՐՔԸ

Տրակտորավորը շուռ է տալիս դեկանիվը: Իսկ ի՞նչպես է շուռ տալիս դեկանիվը տրակտորի առաջին ակները: Այստեղ ուշագրությամբ պետք է նայել, թե վոր մասը վորի հետ է կապված, վոր մասը վորին է շարժում: (Տես եջ 10-ի նկարը):

Տես, — դեկանիվի հենց կենտրոնից ցած է գալիս պողպատե մի յերկար ձող, վորը ամուր կերպով միացրած է գեկանիվի հետ ուրեմն լեթե շուռ ավելի դեկանիվը, շուռ է գալու և այդ ձողը, վորի մյուս ծայրը շուգունե տուփի մեջն է: Ի՞նչ կա այդ տուփի մեջ: Մտիկ տուր. ամեն տեսակ պտուտակներ, մանեկներ, փոքրիկ զլաններ, իսկ առջևի կողմից՝ մի կոր լծակ: Հիմա փորձիր գեկանիվը դարձնել դեպի աջ: Ի՞նչ կկատարվի լծակի հետ: Նա



իր ցածրի ծայրով շուր կգա դեպի առաջ: Չուզունե տուփի միջի բոլոր մանեկները, պտուտակներն ու զլանակներն այնպես են իրար հարմարեցրած, վոր լծակը շուռ դա ուղած կողմը:

Մրանից հետո ամեն բան պարզ կլինի, լեթե լծակն առաջ գնա, նա իր հերթին առաջ կմղի մի այլ ձող, վոր հարմարեցրած է տրակտորի տակին: դուրս է գալիս, վոր այդ ձողն էլ առաջ կը շարժվի, ահա՛ հենց այս ձողն էլ կձգի այն պողպատե լծակը, վորը միացված է ական հետ, և կձգի ճիշտ այնպես, ինչպես ձեռքը ձիու սանձը: Սույն էլ ազատորեն իր ակներով միասին շուռ է գալիս դեպի աջ:

Այսպիսով գեկանիվը կառավարում է տրակտորի առաջի ակները՝ յերկար պողպատյա ձողի միջոցով, ապա փո-

խանցիչի միջոցով, կոր լծակի միջոցով, տրակտորի տակ ձողի միջոցով (ղեկի քարչ), ղեկի լծակի միջոցով:



ղեկավարութեան մասերը

Ղեկանիվ

Ղեկի գլան

Փոխանցիչ

Ղեկավարութեան լծակ

Ղեկի քարչ

Ղեկի լծակ

տրակտորի տակ


ԻՆՉԻՑՆ ԵՆ ՇԱՐԺՎՈՒՄ ՏՐԱԿՏՈՐԻ ԱԿՆԵՐԸ

Ինչո՞ւ չե շարժվում տրակտորը: Վորովհետև նրա լեռնի տակերը պատվում են: Ահա այդ ակները, բայց խթանները նրանց վրայից հանած: Այդ լավ մտիկ արա ու վճռիր, թե լուսանրկարիչը վոր կողմից ե հանել այդ տակների լուսանկարը: Չես կարող տեսի նա ուղղակի հանել ե ակները տրակտորից և նրանց ախպետ շուռ տվել, վոր վերևից նայելիս՝ ատամնավոր անիվը լերիս: Ինչ նպատակով ե նա այդպես լուսանկարել: Վորպեսզի քեզ ցույց տա ամենագիտավորը՝ ցույց տա, թե ինչիցն ե վոր նրանք պտտվում են: Չե վոր հենց ատամնավոր անիվն ե, վոր պտտեցնում ե ակները:

Յեթե պտտեցնես ատամնավոր անիվը, տպտ կպտտվի սոնին ևս, իսկ նրա հետ միասին՝ նաև ակները: Ի՞նչն ե պտտեցնելու այդ ատամնավոր անիվները: Արդյո՞ք մի մարդ ղեննք զրա համար— Չե: Դե վոր մեքենա չի, թող աշխատի ինքն իրեն, իսկ մարդը պետք ե միայն կառավարի:

Նայիր աջ կողմի նկարին: Ահա ամբողջ այս պողպատածող նեցուկն իր ատամնավոր անիվներով պնդացրե՞ծ ե տրակտորին: Տեսնում ես, նեցուկի մի ծայրին գտնվում ե լերիու մեծ ատամնավոր անիվ: Սրանց ատամները մտնում են այն ատամնավոր անիվների

ատամների արանքները, վորոնք նստած են տրակտորի ակների սոնու վրա: Իսկ նեցուկի մյուս ծայրին հապցրած կա մի կլոր սկավառակ: Հենց վոր զրան պտտեցիր, միանգամից սկսում են պտտվել նաև նեցուկի վրայի բոլոր ատամնավոր անիվները, իսկ զրանցից ել՝ մեծ ատամնավոր անիվները: Ե՛, ինչո՞ւ համար են այդ բոլոր ատամնավոր անիվները: Արդյո՞ք, ատանց զրանց չի կարելի— Կոչ, չի կարելի: Այստեղ պետք ե լավ միտք անես, թե վոր ատամնավոր անիվը ի՞նչպես ղենս, վոր ատամնավոր անիվը վորին միացնես: Հարկավոր ե արագ ղենալ՝ միացնում ես մի գույզը, հարկ կա ավելի զանդազ գնալ՝ լերիւրդն ես կցում, ղեռ ել ավելի զանդազ՝ լերրորդը: Յեվ տհա դու կունենաս լերեք տեսակի արագութուն: Այդ պատճառով ե, վոր այս նեցուկն իր ատամնավոր անիվներով ստացել ե արագությունների հույս անունը:



Հիմա, լեթե ուժդ կպատի, իսկ հավանորեն չի պատի, ձեռքդ տու արագութունների տուփի ծայրի սկավառակը և պտույտ տուր նա պտույտ կտա միանգամից առաջի գույզ ատամնավոր անիվները, այնուհետև արդեն մի ատամնավոր անիվ մյուսը, և ապա ամբողջ փոխանցիչ սխեման, ինչպես ժամացույցի մեխանիզմն ե. իսկ մեծ ատամնավոր անիվների պտտելուց կսկսեն պտտվել ակների վրայի ատամնավոր անիվները, իսկ վերջիններից՝ նաև իրենք՝ տրակտորի ակները:



ԻՆՉԻՑՆ Ե ՊՏՏՈՒՄ
ՄԻԱՅՄԱՆ ԱԳՈՒՅՑԸ

Ինչո՞ւ լին կեռ սվել
զլանը: Ինչո՞ւ հազցը-
րել՝ վրան պողպատե ձո-
ղիկներ, իսկ դրանց զլխին
ել՝ չուզունե բաժակներ:
Յեվ ինչո՞ւ համար բաժակ-
ներից լերկուսը պետք է
բարձր լինեն, իսկ լեր-
կուսը՝ ավելի ցածր:



Սկավառակ—միաց-
ման ազուլց
|
Արագությունների
տուփ
|
Ակների ատամնա-
վոր անլիներ
|
Ակնասունի
|
Ակներ


Գլանը կեռ է սված գիտամամբ: Դե բռնիր գլանը լերկու ծաղրից,
թեկուզ շատ ծանր է, իսկ լես մեջտեղից բռնած, կսկսեմ պտույտ
առլ գլանը: Միջին մասը գեպի վեր շուռ սալուն պես, ծալրա-

մասերն իրենց բաժակներով միասին կեջնին ցած: Այսպես ել կը-
ջարտանակվի մեկ՝ ծալրերի բաժակները կիջնեն, իսկ մեջտեղին-
ները կբարձրանան, մեկ՝
ընդհակառակը, ծալրիները
կբարձրանան, մեջտեղին-
ները՝ կիջնեն: Այս անսակ
զլանը, վոր մի քանի տե-
ղից կեռացրած է ծնկան
պես, կոչվում է ծնկավար
զլան:



Մակավոր՝ գլանի վրա
հազցրած են վոչ թե
պողպատե ձողիկներ, այլ՝

չորժանակներ: Շարժանակների վրա, վոչ թե բաժակներ, այլ՝
մխոցներ: Յեթե վերցնեք շարժանակն իր մխոցով, գնդերիթները
հանեք, կափարիչը վերցնեք, զլանին հաղցնեք, նորից կափարիչը
գնդերիթներով պնդացնեք, ապա հիմա արդեն կարելի կլինի աշ-
խատել: Հավանորեն, դու հաճախ տեսած կլինես, թե ինչպես է
աշխատում շարժանակը: Շոգեշարժի մեծ անիվը ևս այդպիսի մի
շարժանակ ունի, միայն ավելի լերկարը: Յերը գնացքը ճանապարհ
է ընկնում, նախ լես ու առաջ է գնում դանդաղ կերպով, հետո



ավելի արագ, ել ավելի արագ ու արագ: Այսպես ել ծնկավոր
զլանից մեր շարժանակն է լես ու առաջ գնում, ապա արագ ու արագ:



ՄԻՈՑՆԵՐՈՎ ՇԱՐԺԱՆԱԿ



ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՇԽԱՏՈՒՄ ՄԻՈՑՆԵՐԸ

Ի՞նչ են անում այս ձեռքերը:

Նրանք ստուգում են՝ արդյո՞ք շարժանակը լավ է դրած մխոցի մեջ: Չէ՞ վոր այդ թաք չի, պետք է մխոցը շիտակ նստի իր առանցքին: Իսկ յեթե հանկարծ շիտակ չնստի ու սկսի դես ու դեն անել, այստեղ արդեն բանք փուշ եւ Հենց վոր սկսի մըխոցը մտորի զլանում լեռ ու տոռալ գնալ, ապա կսկսի գլանի այս պատին տալ, այն

1010
42463

պատին տալ, փոսեր առաջացնել նրանց վրա, մտորը ծուխ կարձակի, գործը բոլորովին կանգ կառնի: Իսկ յեթե մխոցը սկսի իր թխթխկոցը դաշտում, աշխատանքի ժամանակ Այս պարագայում արդեն պետք է տրակտորը կանգնեցնել և նորոգում կատարել: Աշխատանքի միջոցին տրակտորի կանգ առնելը դատարկ բան չի, լուրաքանչլուր րոպեն թանգ արժի: Այստեղ արգելք, աշտեղ խանգարում և ա՛նա տեսար՝ բերքը քիչ ստացվեց: Գիչ բերքով քիչ էլ գործարան կկառուցեք, քիչ էլ մեքենաներ կշինեք: Մտիկ տուր տրակտորին, վինց վոր մայրը՝ մանկանը:

Ինչո՞ւ այդ ողակն ալդպես է դրած: Արդյո՞ք, մի կողմով դրած է մխոցի փոսիկի մեջ ու աջպես լուսանկարած: Չէ՞ վոր տրակտորի մեջ ալդպես չե: Ալդպես չե: Բայց ալդպես ցույց է տված նրա համար, վոր աչքի զարկի, թե ինչպես լավ է նստացրած ողակը մխոցի փոսիկի մեջ: Բայց ի՞նչպես պետք է հազցնել ողակը մխոցի վրա: Գլխի կողմից ողակը վրա չեն բերում, ծայրերը մի փոքր հեռացնում իրարից և ապա ողակը նստացնում մխոցի փոսիկի մեջ: Ողակները նստացրին պրծան, արդեն մխոցը դատարաստ և աշխատելու:



Չէ՞ վոր դու ինքդ ել կկարողանաս բացատրել թե ինչո՞ւ համար են հազցրած այդ ողակները մխոցին: Պրիմուսի մեջ ող մզած կմառ ի՞նչով ես մզեր: Անշուշտ, փոքրիկ մխոցով՝ ծայրին կաշի անցկացրած: Կաշին նրա համար է հազցրած,




Այդ ժամանակ տուում են, վոր մտարք լավ կոմպլեքսիա ունի:

վոր մխոցը կիպ գնա դառ Յեթե մխոցի կիպուլթյունը թուլանում է, խսկույն մխոցը հանում ես և կաշին փոխում: Կաշին մաշվել եր, ողը թափանցում եր մխոցի պատերի աբանքով և դրա համար ել մղումը թուլացել եր: Նույնն ել այստեղ ե: Մխոցը պետք է կիպ հազցրած լինի գլանին: Այստեղ կաշվի փոխարենն չուգունն ողակներ են, նրանք կաշվից ամուր են և աշպես շուտ չեն մաշվում: Հիմա մխոցը կիպ կմանի գլանի մեջ և պատերի արանքով բաց չի թողնի վոչ ող, վոչ ծուխ:


ԻՆՉՈՒ ԼԱՄԱՐ ԵՆ ՇԵՐԹՈՎ ԱՇԽԱՏՈՒՄ ՄԻՈՑՆԵՐԸ

Քանակով կիսած ձմերուկի պես կարված և արակտորի մատորը նրա ամբողջ ներսը պարզ և վանց վոր ափից վրա: Հրեն մխոցը զլանի մեջ, նա այս բոսկեյիս ցած և եջնում, և հրելով՝ ցած իջեցնում շարժանակը: Սա լել ձախից ցած և իջնում, իսկ աջից սկսում և վեր բարձրանալ:



Իսկ լերը շարժանակը կսկսի վեր բարձրանալ: Յերբ մխոցը կզնա գեպի վեր: Չե՛ վոր շարժանակը ներքևում հազցրած և ծը-


կազոր պանի վրա և ուրեմն, լերը կսկս շուռ գալ շարժանակը սկսելու լե պտույտ առաջ և ծնկավոր գլանը: Նկարի վրա լե, վոր լերկու շարժանակ և լերնում, բաց իրոք, նրանք քանիսն են— Չորսը: Այդ չորսն են պատեցնում գլանը: մերթ մի գուլղը, մերթ մյուս գուլղը: Մի նախիր մխոցի գլխին, սուփի մեջ կա պոչով փոքրիկ մի ափսե վոր իջնում ու բարձրանում և, իսկ ափսեյից ել բարձր, կա մի բարակ զսպանակ: Այդ ափսեն փականի դեռ ունի ինչ և անում:—Մեկ ցածրանում և մի փոքր և բաց անում գլանի վերևի անցքը, մեկ վեր բարձրանում ու փակում ախ, իսկ ինչի համար և այդ բանը—Նրա համար, վոր գլանի մեջ ողը մեկ մանի, մեկ շմանի, մեկ ծախը դուրս գա, մեկ դուրս չգա: Անա այդ և փականի պաշտոնը: Ապա ի՞նչն և փականը վեր բարձրացնում ու ցած իջեցնում: Տես. նրա գլխին ճոճվող լծակը: Իսկ լծակն ինքն ինչի՞ց և ճոճվում: Մեկ լավ մախի տուր, ներքևում գանվում և բուռնցք՝ վորն իր լերկար ձողիկով մեկ վեր և բարձրացնում լծակի մի ծալըն ու իջեցնում՝ մյուսը, ճնշելով զսպանակը, սրա մեջոցով ել փականը: Մեկ ել հակառակն և անում—շուռ գալով ցած՝ իջեցնում և ղծակի մեկ ծալը, բարձրացնում զսպանակն ու փականը ճնշող ծալըր: Ճնշումից ազատ զսպանակը բարձրացնում և փականը և այսպես՝ փոխնիփոխ: Յեվ լուրաքանչյուր փական իր աակին ունի այսպիսի մի բուռնցք, իսկ ախ գլանը, վորի վրա հազցրած են բոլոր բուռնցքները,—զրանց անունով ել կոչվում է՝



բուռնցքավոր գլան:

ՎՈՐՏԵՂ Ե ՏՐԱԿՏՈՐԻ ՍԻՐՏԸ

Դու տրակտորի վեր մասն եւ այտեղ տեսնում: Այդ մոտորի մի մասն եւ իսկ մոտորն ինչ աշխատանք ե կատարում տրակտորի մեջ:—Մոտորը տրակտորի սիրտն ե, նրա մեջն ե տրակտորի ամբողջ ուժը, նրանից ե ուժը հաղորդվում ակներին: Վերտեղ ե




զրված ծնկավոր գլանը Մոտորի մեջ: վերտեղ են գտնվում մխոցներն իրենց շարժանակներով մեկտեղ:—Մոտորի մեջ վերտեղ են փականներն ու բոունցքավոր գլանը:—Մոտորում երբոունցքավոր գլանը պետք ե կառավարի փականները, այդ դու գիտես, իսկ ինքն ինչով ե պարավում:—Տեսնում եո բոունցքավոր գլանի մեծ ատամնավոր անիվը՝ ձախ կողմից, այդա ե, բոունցքավոր գլանի պտտեցնողը: Հազցրու ծնկավոր գլանին, փոքր ատամնավոր անիվը, ծնկավոր

գլանը կսկսի պտույտ գալ, իսկ զրանից ել՝ բոունցքավոր գլանը:

Յեթե մոտորը հանգիստ ե աշխատում, ճրթճրթում ե միտար, ինչպես ծղրիղը, նշանակում ե լավ ե աշխատում: Իսկ չեթե մի բան փչանա մոտորում:—Յեթե գլանի մխոցը լիսլիկա, չեթե մաշվի փականը, չեթե կոտրվի զսպանակը ե, քիչ բան կարող ե պտտանել մոտորին, այն ժամանակ շարժանակը լետ ու առաջ չի գնալ, կանգ կառնի ծնկավոր գլանը, ատամնավոր անիվները չեն պտույտ դալ տրագությունների տուփում, չեն պտտվիլ սոնու ակ նառանցքի ատամնավոր անիվները, կանգ կառնի տրակտորը: Այո,

մոտորը տրակտորի սիրտն ե, ե մեքենավարը նույնպես լսում ե տրակտորի սիրտը՝ վոնց վոր բժիշկը հիվանդինը: նույնպես վերցնում փոփակը—ստերոսկոպը ե լսում թե ինչ ձայներ են լսվում մոտորի ներսում, լսում ու իմանում ե՝ արդյոք հիվանդ ե թե առողջ




մասոր:

ԻՆՉՊԵՍ Ե ՍՊԻՏԱԿ ՆԱՎԹԸ ՄՈՏՈՐ ԱՆՑՆՈՒՄ

Յեթե քեզ տանն—դե մի, տրակտորը սպիտակ նավթ ամբի, մոտորին վառելանույթ առը, ինչտեղ կածես այն: Անշուշտ այս մեծ պահամանը: Յեթե այս պահամանում սպիտակ նավթ կա, ուրեմն մոտորի վառելիքն ապահովված ե: Բաց կանես պահամանի տակի փոքրիկ ծորակը, նավթը պղնձե խողովակով կանցնի տուփի մեջ: Սակայն ինչո՞ւ տուփի մեջ ե վոչ միայնզամից մոտորի գլանի մեջ վերովնեակ տուփում սղն արագ ընթացք ունի, վոնց վոր քամին:


նա խլամ ե նավթը, փոշիացնում և փոշիները հեռան առած՝ ներս և խուժում մոտորի գլանը, վոր մխոցի վերևումն ե, փականը բացվում ե և ներս թողնում նավթի փոշին: Այդ գեպում ի՞նչ կպատահի ողի և նավթի այդ խառնուրդին: Այժմե ինչ: Նա խակուն միանգամից կբռնկվի ճրթոց արձակելով:

Յերբ ավտոմոբիլի կամ տրակտորի մոտորն աշխատում ե, միշտ լսվում ե ճրխճրխկոց, վոր առաջանում ե ողի և նավթի խառնուրդի բռնկումից: Իսկ ի՞նչ ե առաջանում նման բռնկման միջոցին:— Նույնը՝ ինչ վոր ասեն մի պայթումի ժամանակ: Յեթե զինամիտը պայթում ե, միանգամից գոյանում են գազեր: Ո՞ւր գնան զրանք: Յելք են վորոնում լեթե լելք գառն՝ լավ, փակ լեթե վոչ կսկսեն ճնշել պատերին տյնքան, մինչև վոր իրենց համար պատուհան բաց անեն: Այստեղ ևս նույն բանն ե տեղի ունենում: Մի անգամ լերբ նավթը բռնկվեց, առաջացած գազերն ել դուրս գնալու տեղ չուեն, նրանք ճնշում են մխոցը, սա լջնում ե ցած, բոթում շար-



ժանակը, շարժանակն սկսում ե պտտեցնել ծնկավոր գլանը, օտ չել՝ արագությունների տուփի տատանավոր անվիլները, իսկ զենն արդեն սկսում են պատվել նաև տրակտորի ակները: Իուրս ե գալիս, վոր ամենապայտավոր հրիչը նավթն ե, ավելի ճիշտը՝ նավթի փոշին ողի հետ խառն: Այն տուփը, վորի մեջ խառնվում են իրար ողն

և փոշիացած նավթը, կոչվում ե կարբուրատ, իսկ բարբ մեկտեղ՝ կ պահամանը և կարբուրատորը և այն մասերը, վորոնք տանչություն ունեն նավթի հետ, կոչվում են այսպե՛ս:



վառելանույթով սնման սխեսմ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՌՈՒՄ ՆԱՎԹԸ ՄՈՏՈՐՈՒՄ


Այդ հենց այն փոքրիկ մեքենան ե, վորով բռնկվում ե զրանք մեջ նավթը: Տրակտորի մոտորում քանի՞ գլան կա— կինում ե լերկու, լինում ե և չորս գլան: Իսկ ամենից հաճախ լինում ե չորսը: Ուրեմն քանի՞ գլանում բռնկումներ պետք ե տեղի ունենան ի հարկե չորսի մեջ ևս, սակայն նրանք պետք ե տեղի ունենան տարբեր ժամանակի ի՞նչ պատճառով:— Այն պատճառով հենց, վոր մի գլանում մխոցը կանգնած ե ավելի բարձր, իսկ մյուս գլանում ավելի ցածր, նայած՝ թե այդ միջոցին ծնկավոր գլանը վո՞նց ե շուռ լեկած: Իսկ ամենից լավն ե նավթը վառել այն ժամանակ, լերբ մլխոցը գլանի վերևումն ե: Նշանակում ե զանազան գլանների մեջ նավթը վառելու լե զանազան ժամանակներում: Մերթ մեկ գլանումն ե բռնկումը, վորից շուռ ե գալիս պատվող գլանը, մերթ՝ մյուսում:

Ահա այսպես փոխնիփոխ աշխատում են մխոցները: Այժմ քեզ հասկանալի լի, թե ինչու մեքենայից շորս թիչեր են բաժանվում: Յուրաքանչյուր թիչ մտնում է մի այլ զլան, մի այլ զլանի լի հարդում մեքենայի հոսանքը:

Յեթե հոտանքը զալիս է մեքենայից, այդ նշանակում է, վոր մեքենան ելեկտրական զինամոմեքենա չի: Իսկ ինչն է սախտում, վոր զինաման աշխատի, ինչն է նրան շարժում: Ծնկավոր պլանը:— Յերբ

պտտվի ծնկավոր զլանը, ահա ժամանակ էլ կպտտվեն մեքենայի բոլոր մասերը: Բայց այնուամենայնիվ, ինչպես են վառում նավթը: Ահա թե ինչպես վերցնում են, լուծանկարում ցույց տվածին ման մի մոմ, նրա ցածի ծայրը պտուտակում են մոտորի զլանի մեջ, իսկ վերևի մանեկին միացնում են զինամոմեքենայի թիչը: Հենց վոր հոսանքն անցում է մոմի մեջ, նրա ներքևի լարերի միջև կալծ է արձակվում, իսկ այդ միջոցին կարբուրատո-

րից նավթի փոշին ներս է մղվում զլանի միջև այնպես է սարքած, վոր հենց այդ վայրկյանին կալծը բռնկվի, վորն էր հերթին բողբալում է նավթի ոգախառը փոշին է, իսկ լիթե նավթը վառվեց, ուրեմն և մխոցն էլ շարժվեց և սկսեց փող աշխատանքը: Ահա թե վնեց է աշխատում:



Դինամոմեքենա մագնիսոնը:

Մագնիսոնը պետք է լավ աշխատի, մոմերը պետք է սարքի իննն, — մի խոսքով, պետք է սարքի լինի վառման ամբողջ սխեսմը:

Յերբ տրակտորին նստում ես առաջին բանը, վոր տեսնում ես, առաջի կողմից, այդ ռաշիաճարն է: Ի՞նչ է նրա պաշտոնը: Ի՞նչ է լինում, լիբը մոտորն աշխատանք է կատարում:— Անընդհատ նավթի բռնկումներ են լինում: Այս բռնկումներից մոտորը խիստ տաքանում է: Իսկ այդ բանը նրան շատ փաս է: Տաքությունից մեքենայի մասերն ափելի լին տրամադրվում փչանալու, իսկ քսած ձյութը՝ սկսում է այրվել: Առանց ձյութի լի՛ բոլոր մասերը հարհարվում են և արագ մաշվում: Այս պատճառով էլ մոտորից պետք է խել նրա տաքությունը:

Ռազիատորի մեջ շուր են լցնում: Այստեղից շուրը հոսում է մոտորի զլանները, տաքանում է, և ուրեմն, մոտորից առնում են նրա տաքությունը: Բայց տաքացած շուրն արդյո՞ք,



թեթև է սառնից:— Թեթև է: Յեվ ահա այս թեթև շուրն սկսում է ավելի ու ավելի վերև բարձրանալ, համեմատաբար տանող վերևի փողրիկ խողովակին: Իսկ ռազիատորի մեջ շարքով շրված են փողրիկ շատ խողովակներ: Այս խողովակները վերևից պնդացրած են մանեկներով:

Անդամ նկարից լերևում է, թե ինչպես վերևից այդ մանեկներն ամրացվում են խողովակների վրա, գալիկոնի նման մի բանալիով:

Մասրից ստք չուրը կգտ ու կհասի խողովակի մեջ: Խողովակների
 լեակում սգափոխիչը (վենտիլատոր) պատվում է ու մաքրում խո-

ղովակների արանքի ողը:
 Մինչև խողովակների միջով
 անցնելը՝ շուրը սառչում է
 ու նորից մասոր անցնում:

Ինչ ես անում եմ,
 լերը սաք սուպը ուզում ես
 հովացնել: Գրալ գրալ վերց-



նում ես ավստից սուպը և բորձ-
 րից նորից բարակ շերտով ավ-
 սեն ամուս, դեռ փչելն էլ գլխովը:
 Դրա պես էլ այստեղ սարքած է



սառեցման սիսեմը:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԻԱՆՈՒՄ ԻՐԱՐ ՏՐԱԿՏՈՐԻ ԳԼԽԱՎՈՐ
 ՄԱՍԵՐԸ**

Իր արակտորը շրջանակի վրա միայն, հետո լել հազցրու ա-
 սալի ակները թրթուրածն ժապավենի հետ մեկտեղ և ահա՛ կու-
 գնալ կարող ես: Յե՛վ իրոք, լեակի ատամնավոր անիվները կան,

արագութունների տուփն իր տեղումն է, չնայած, վոր չի լերիում:
 Իննն էլ ինչ է հարկավոր: Մասոր—հրեն մոտորն էլ, նույնիսկ
 ժաղնիտանն է լերում, իսկ առջևի կողմում սաղիատորն է: Բայց ինչն-
 պետք է շրջանակի վրա դնել: — Վորովհետև արակտորի բոլոր մա-
 սերը ևս պետք է մշտապես միմեուհն տեղում գտնվեն, չպետք է
 իրարից գատվեն և ամուր կապ լաճ պետք է լինեն իրար: Տրակտորը
 շրջանակի վրա դրիք, նշանակում է բոլոր մասերը ևս լրենց տե-
 դերում ամուր նստել են, անգերից չես շարժվել:



Հիմա ինքդ նստիր արակտոր, վերցրու դեկը, ձեռքդ առ բո-
 նակները և կառավարիր ինքդ: Տեսնում ես, անա այդ ձողերը լը-
 ծակներն են իրենց բռնակներով: Մի բռնակ տալլին է գտնազան
 արագութուն—ուրեմն տեղափոխում է ատամնավոր անիվները ա-
 րագութունների տուփի մեջ: Առաջ կբռթես շոնակը՝ մի արագու-
 թուն է, լետ, դեպի քեզ կտաս բռնակը՝ այլ արագութուն է:
 Յերկրորդ բռնակը արվելակում է արակտորը: Յե՛՛՛՛՛ մոտիկից գի-
 տես, կտեսնես պեղալը, վորը արակտորավարը վտաքով սեղմում է:
 Ինչնու համար է պեղալը: Սեղմեցիր վտաքով բռնակն՝ արագու-
 թունների տուփում, ատամնավոր անիվները չեն աշխատի այլևս:
 Հեռում է մոտորը, սակայն արակտորը տեղից չի շարժվում, քար
 կարած կանգնած է: Վտոդ լետ վերցրիր բռնակից, չես սեղմում այլևս,
 սկսում է արագութունների տուփն աշխատել և արակտորն առաջ
 է գնում:

Այժմ պինդ պահիր ձեռքիդ զեկը, ապանջ դիր, ինչպես և աշխատում մոտորը և քաշիր քո ալուսդ: Ամուր իրենց տեղերումն են արակառի բոլոր մասերը, նշանակում և ամուր կապված են նրանք:



ԻՆՉՊԵՍ Ե ՔԱՇՈՒՄ ԵՐԱԿՏՈՐՆ ԻՐ ԿՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Տրակտորը դաշտ և դուրս գալիս և տհա նրան կցում են գութանը: Նրան կարելի լի կցել նաև փոցխ, շարքացան, խրձկատ



մեքենաներ և կոմբայնը: Միայն ափսոս, վր արակտորը շատ ուժ և կորցնում ինքն իրեն տեղափոխելու համար: Յեթե իրեն քաշելու

համար ալդքան ուժ չծախսեր, նա ավելի շատ փոցխեր, գութաններ քաշ կտար և ուրեմն՝ ավելի արագ ու շատ աշխատանք կատարած կլիներ:

Իսկ ինչպես են կցում արակտորին գլուղատնտեսական գործիքները: Այդ բանի համար նրա լետևում կա հատուկ հարմարություն—կցան մի աղեղ: Տեսնում ես, լուսանկարի վրա լերկուտարներ աղեղներ կան: Մեկն ողակ ունի: Յեթե կցվող գործիքը կեռ ունի, նշանակում և այս աղեղը լավ և կեռը կցիլը ողակվի: Յեթե կարիք կա, վոր ողակն ա-



վելի բարձր լինի, կտրելի լի աղեղն վեր քաշեր: Իսկ ինչ պետք և անել լետև կցվող գործիքը կեռ չունի: Այդ ժամանակ վերցնում են լերկորդ կցան աղեղը՝ անա նկարում ցույց տվածի պես, գնդերի վրան: Գնդերի վրա հանեցիլը, անցկացրիլը գործիքիդ ողակով, կրկին հազցրու գնդերի վրա կտրելի լի արդեն քշել առաջ:

Յեթե ուզում ես գործիքդ ավելի աջ կողմից կցել, գնդերի վրա ել աջ կողմի ծակովիլ ես անցկացնում, իսկ լետև ձախ տանել՝ ձախ կողմի ծակովիլ ես անցկացնում: Կցումը կատարված պրծած և, ճանապարհվիլը դաշտ ու սկսիլը աշխատել:

Իսկ լետև կամենում ես մի քանի գործիքներ կցել: Կարող ես կցել մի քանիսը: Կցիլը կեռին խաչաձև մի ձող, իսկ դրան ել շարքով մի քանի փոցխ, մի քանի շարքացան: Ահա այս ել՝




կցան ցալը:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՆԻ ԳՑՈՒՄ ՏՐԱԿՏՈՐԸ

Աշխատանքի գուրս զալուց առաջ հարկավոր է մոտորը փորձել: Անա տրակտորավորը, ձեռքն առավ բռնակը, ձգեց վեր ու մոտորն սկսեց աշխատել: Ինչհետև նրա համար, վոր այդ բռնակը պտտեցնում է ծնկավոր զլանը, իսկ այս զլանը վոր պտտել սկսեց,



պտտում է և բռնցքավոր զլանը և ուրեմն փականը ևս բացվեց, նախքին ևս զլանի ներքն անցավ ու բռնկվեց, մխտցնել հարված ստացավ, իսկ սրանից ել արդեն ծնկավոր զլանն սկսեց պտուլալ գար:



Անա որպես են բանի գցում մոտորը՝

բանի գցող բռնակով:

Գեոհրատի սպորտոմ
Պատ. № 2825
զլավի-6733 (բ)
հրատ. 1813
սիրած 1000

Հանձնված է արտադրության 19 սեպտեմբերի 1933 թ.
Մտորագրված է արտադրության 11 հունվարի 1933 թ.



ԳԻՆԸ 50 Կ



«Ազգային գրադարան»

NL0143019

16739